ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1230: **գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՈՒՐԲԱԹ, 27 ԱՊՐԻԼԻ 2018Թ.
№ 11 (469)

Ով հայ ժողովուրդ,
քո միակ փրկությունը
քո հավաքական ուժի մեջ է...

Եղիշե Չարենց

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Թավշյա հեղափոխությունը նոր փուլ է թեւակոխում

Ես թողնում եմ երկրի ղեկավարի՝ Հայաստանի վարչապետի պաշտոնը. Սերժ Սարգսյանի հայտարարությունը

ԵՐԵՎԱՆ, 23 ԱՊՐԻԼԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը հայտարարություն է տարածել: «Արմենպրես»-ը ներկայացնում է այն ամբողջությամբ.

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Դիմում եմ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին, մեծերին ու իմ սիրելի երիտասարդներին, կանանց ու տղամարդկանց,

Դիմում եմ փողոցներում «Մերժիր Սերժին» կոչով օր ու գիշեր կանգնածներին եւ փակ փողոցներով այս օրերին դժվարությամբ աշխատավայր հասնող եւ իրենց պարտքն անտրտում իրականացողներին,

Դիմում եմ ուղիղ եթերի առաջ օրերով գամվածներին եւ օր ու գիշեր հասարակական անվտանգությունը տղամարդու պես ապահովողներին,

Դիմում եմ սահմանին կանգնած մեր քաջարի զինվորներին ու սպաներին, դիմում եմ իմ զինակից ընկերներին,

Դիմում եմ իմ կուսակից ընկերներին, քաղաքական բոլոր ուժերին եւ գործիչներին:

Որպես երկրի ղեկավար դիմում եմ վերջին անգամ:

Նիկոլ Փաշինյանը ճիշտ էր: Ես սխալվեցի: Ստեղծված իրավիճակն ունի մի քանի լուծում, բայց դրանցից ոչ մեկին ես չեմ գնա: Դա իմը չէ: Ես թողնում եմ երկրի ղեկավարի՝ Հայաստանի վարչապետի պաշտոնը:

Փողոցի շարժումն իմ պաշտոնավարման դեմ է: Ես կատարում եմ ձեր պահանջը:

Խաղաղություն, ներդաշնակություն եւ տրամաբանություն մեր երկրին:

Շնորհակալ եմ»:

«Քաջարան» ոսկի հուշամեդալ՝ Սյունյաց սրբազան հողը պղծելու համար

Քաջարան քաղաքի մի խումբ բնակիչներ հիշեցնում են, որ 2017թ. օգոստոսի 21-ին՝ Քաջարան քաղաքի օրվա կապակցությամբ տեղի ունեցած հանդիսության ժամանակ, համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանը մարզպետ Վահե Հակոբյանին է հանձնել «Քաջարան» ոսկի հուշամեդալ:

Քաջարանցիները դա գնահատում են իբրեւ ապշերոնյան տիպի քծնանքի աննախադեպ արտահայտություն եւ քաջալերանք՝ մարզպետի հակասյունիքյան եւ հակապետական գործողություններին:

Քաջարանցիները պնդում են նաեւ, որ խոպանչի մարզպետին «Քաջարան» անունով թեկուզեւ հնարովի մեդալ տալը մեծագույն անբարոյականություն է, ամոթալի դրվագ Քաջարանի փառավոր պատմության մեջ ու պահանջում են անհապաղ հետ վերցնել մեդալը, իսկ համայնքի ղեկավարից ակնկալում են ներողության հայցում:

Ինչո՞ւմն է բանը:

Անշուշտ, կատարվածը Քաջարան համայնքի ավագանու իրավունքն է, եւ ոչ ոք չի կարող կասկածի տակ առնել դրա օրինականությունը:

Այդքանով հանդերձ՝ տեղի ունեցածն առնվազն մի քանի հարցի, նաեւ տարակույսների տեղիք է տալիս:

Մի պահ ընդունենք, որ Վահեն ինքը չէ հրահանգել համայնքի ղեկավարին՝ իրեն տալու մեդալ:

Այդ հանգամանքը շեշտում ենք պարզագույն եւ հանրահայտ պատճառով՝ քաջարանյան մերօրյա իրականության մեջ ամենաանշան հարցերի վերաբերյալ անգամ որոշումն ընդունում է Վահե Հակոբյանը՝ միանձնյա:

Մի պահ ընդունենք նաեւ, որ այս անգամ, իբրեւ բացառություն, Վահեն չի իմացել, թե Քաջարանի տեղական ինքնակառավարման մարմինն իր անձին առնչվող ինչ որոշում է կայացրել:

Հիմա՝ ի՞նչ ասել է «Քաջարան» ոսկի հուշամեդալ:

Քաջարան քաղաքը մինչեւ վերջերս ունեցել է «Արցախյան ազատամարտ» մեդալ՝ հիմնված 2008-ին, որի թիվ 1-ը 2013-ին հանձնվել է ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին:

Վահե Հակոբյանին այդ մեդալից տալ չէին կարող, քանի որ, ըստ մեդալի կանոնադրության, այն տրվում է միայն Արցախյան ազատամարտի մասնակիցներին: Իսկ Վահեն ոչ միայն այդ հերոսամարտի հետ հեռավոր աղերս չունի, այլեւ ծաղրում է ազատամարտի մասնակիցներին եւ տեղի-անտեղի կասկածի տակ առնում սյունեցիների արժանապատիվ մասնակցությունն Արցախյան գոյակռվին:

Քաջարանին քաղաքի կարգավիճակ տալու 50-ամյակի կապակցությամբ թողարկվել էր մեկ ուրիշ մեդալ՝ «Քաջարան-50»: 2008-ի օգոստոսի 21-ին այդ մեդալից 500 հատ (այդքան էր թողարկվել) բաժանվեց տոնակատարության հյուրերին:

էջ 6

Տասնմեկ օր, որ ցնցեց Հայաստանը եւ նոր իրականության սկիզբ դրեց

Լուսանկարներ՝ առանց մեկնաբանության

Ապրիլ 2018թ., Սյունիքը մայրաքաղաքի հետ էր...

Լուսանկարներ՝ առանց մեկնաբանության

1918-1920 ԹԹ. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սկիզբը՝ No_10(468)

Այս իրավիճակի ինչպես վավերական, այնպես եւ գեղարվեստական իրակությունները զարմանալի նույնությամբ համընկնում են: Ահա պատմական վկայությունը. **«Կառավարության հոգածության առարկա էր եւ Սեւանա լճի նավարկությունը: Սեպտեմբերից սկսած լճի վրա սկսեց բանել առաջին շոգեմակույկը: Մի քանի շաբաթ հետո սկսեց գործել «Աշոտ Երկաթ» «ռազմանավը» մի արագահարված թնդանոթով: Հիմք դրվեց մի ավելի մեծ շոգենավի շինության: Սեպտեմբերի 3-ին Շահթախթից Երեւան բերվեց «Սեստրիցա Նյուշա» շոգենավը, որ ռուսները տանում էին Վան եւ թողել էին կես ճանապարհին: Նավը վերանվանվեց «Գեղանույշ» եւ նույնպես պիտի փոխադրվեր Սեւան: Ենթադրվում էր Սեւանի բոլոր եզերքները կապել նավային հաղորդակցությամբ եւ հետզհետե զարգացնել նավագնացությունը:**

Սեւանի նավագնացության օգտին էին Խորհրդարանի անդամ Տիգրան Ծամհուրը – «ծովակալ Սեյմուր» – եւ երիտասարդ ծովային սպա Թումանյանը, որ այնպես դաժանորեն սպանվեց բոլշեւիկների ձեռքով՝ բոլորովին անմեղ տեղը: Հոր՝ պրոֆ. Թումանյանի հետ եկել էր Բեսարաբիայից: Հայրը վարում էր դրամների տպագրության գործը, ինքը, պատանի հոգու ամբողջ եռանդով նվիրվել էր «հայկական նավատորմիղի» ստեղծման: Քաղաքականությամբ չէր հետաքրքրվում, բայց Հայաստանի խորհրդայնացումից հետո անմիջապես դարձավ քաղաքական առաջին զոհը» (ՍՎ, ՀՀ, էջ 435):

Բառացիորեն նույն պատկերն է Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպում, որ ամբողջությամբ արտացոլում է Առաջին Հանրապետության այդ ժամանակները: Երկրի կառուցման նույն եռանդը, նույն դժվարությունները, Սեւանը նավարկելի դարձնելու նույն ծրագիրը, եւ անգամ հոր եւ որդու Թումանյան ազգանունն է ընդհանուր թե՝ իրական գործիչի, թե՝ գրական կերպարի համար: Նաեւ նավը Սեւան հասցնելու ջանքերը, որ գործադրում է գլխավոր հերոս Արա Հերյանը(ավելի հանգամանորեն տես Դ.Գասպարյան, «Հայ գրականություն», գիրք 1, Երեւան, 2000, էջ 106-131):

Շանթի գլխավորած պատվիրակությունը Մոսկվայում մնաց 4 ամիս 10 օր (4. 05. – 14. 09. 1920): Բանակցությունները չհասան տրամաբանական ավարտի, որովհետեւ անկախ Հայաստանի փոխարեն, որ կարող էր դառնալ Լեհաստանի ու Ֆինլանդիայի նման մի երկիր, որոնք՝ որպես ինքնուրույն պետություններ, տարբեր ճանապարհներով այդ տարիներին առանձնացան նախկին ինքնակալությունից, ռուսները Հայաստանի խորհրդայնացման ծրագիր ունեին եւ աշխատում էին այդ ուղղությամբ: Բացի դա, հայ-ռուս դաշինքի վավերացմանը ռազմաքաղաքական տարբեր գործողություններով խանգարում էին թուրք-ադրբեջանցիները: Պահպանվել են Շանթի նամակները՝ գրված Վրացյանին: Դրանք անհրաժեշտ են ինչպես պատմական իրավիճակի մեջ ճիշտ կողմնորոշվելու, այնպես եւ Շանթի կենսագրության որոշ մանրամասների տեղյակ լինելու համար: Ահա դրանք (պահպանում ենք բնագրային կետադրությունը եւ գրությունը՝ Լեգրան –Լըգրան):

«Լ. Շանթի նամակները Մոսկվայի բանակցութեանց մասին

Այս հատորի առաջին տպագրությունը պատրաստելիս, դրանից առաջ եւ վերջը, քանիցս խնդրել եմ Լեւոն Շանթին, որ գրի առնե իր հուշերը Մոսկվայի բանակցությունների մասին: Միշտ խոստանում էր, բայց մինչեւ մահն էլ խոստումը չկատարեց: Ինչ որ կարողացա «պոկել»՝ հետագա երկու նամակներն են, որոնց մեջ հստակ կերպով արտահայտված է Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահի վերաբերումը դեպի բոլշեւիզմը եւ դեպի հարաբերությունները բոլշեւիկների հետ:

Բայց նյութի հետ առնչություն չունեցող կետեր կան նամակներում, որոնք հետաքրքրական են Շանթի կենսագրության տեսակետից, ուստի տվինք առանց հապավումի:

Սիմոն ջան, ահա քանի օր է ուշացուցի նամակիդ պատասխանը հուսալով որ կերպ մը տրամադրեմ ինծի եւ գոնե համառոտ բան մը գրեմ քեզի քու ուզած հարցի մասին. բայց վերջապես եկա այն տխուր եզրակացության, որ անկարող եմ, այս վայրկյանին բոլշեւիկներով ու բոլշեւիկյան տխմարություններով զբաղվելու բնավ գլուխ չունիմ. հիմա ես իմ գլխիս մեջ ունիմ իմ սեփական բոլշեւիզմը. Այնպես խրվեր եմ պարտքերու, անփողության, վիճակի անորոշության եւ օրվա ապրուստի դժվարություններու մեջ, որ չգիտեմ, ինչպես եմ տակեն դուրս գալու. մեր դպրոցի վիճակը խախուտ է, վճարածը չնչին ու անկանոն, իսկ իմ բոլոր ձեռնարկներես ու ծրագիրներես ոչինչ դուրս չեկավ, տված հայտարարությունս իմ անպետք աշխատանքներուս վրա նոր անպետք աշխատանք մը ավելցուց՝ տեղեկատու եւ խորհրդատու Բյուրո: Երբ օր մը գալու ըլլա այն երջանիկ ժամանակը, երբ հնար մը ունենամ քիչիկ մը ազատ գլուխ ունենալու, եւ ուտելու հացեն ու դպրոցի վճարեն դուրս ուրիշ բաներու մասին ալ մտածելու, կնստիմ ու կգրեմ մեր դեպի Մոսկվա առաքելությունը եւ իմ տպավորություններս, իհարկե, ոչ իբրեւ պատասխան ստախոս ու ցած Չիչերիններու ու Չիչերինիկներու, այլ անկախ աշխատանք մը ինքն իրեն համար, իբրեւ հուշեր:

Հիմա քու հարցերուդ պատասխանեմ մեյ-մեկ նախադասությամբ: 1. Մեր պատվիրակությունը ուղարկվեցավ, որովհետեւ բոլշեւիկները արդեն տեր էին Ադրբեջանին եւ անոնց հետ լեզու մը գտնելը դարձեր էր անհրաժեշտ թե վրացիներու համար եւ թե մեզի. Ռուսը նորեն եկեր էր Կովկաս: 2. Մենք Մոսկվա հասանք այն ժամանակվա հաղորդակցության միջոցներու հնարավոր արագությամբ: 3. Կարախանի հետ համաձայնության եկանք բոլոր կետերու վրա. դաշինքը չստորագրվեցավ, որովհետեւ Բագվի հայ, վրացի եւ թաթար կոմունիստները բոլոր միջոցներով սկսան ճնշում բանեցնել Մոսկվայի վրա, պահանջելով որ Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը թուրքական հողեր են, անվիճելի թուրքական եւ Հայաստանի հետ միացնելու խոսք անգամ լինել չի կրնար: Մոսկվան 1-2 ամիս ժամանակ գործ դրավ իր Բագուի ընկերների հետ համաձայնության գալու եւ տեսնելով որ անկարելի է, որոշեց բանակցությունները տեղափոխել Կովկաս եւ ուղարկեց Լեգրանը Բագու եւ հոնկե Երեւան: Մենք ո՛չ թե ուշացած կամ խանգարած ենք, այլ շարունակ դիմած պահանջած ենք, որ շտապեն, որ վերջապես պատասխան մը տան, որ մենք գործ ունենինք եւ այդքան երկար Մոսկվա նստիլ չենք կրնար: 3. Այդ է մեր որոշման պատճառը. մեր ետ գալն էլ կատարված է այն ժամանակվա հնարավոր արագությամբ. կրնայինք Բագվով շատ ավելի արագ տեղ հասնիլ, բայց մենք չուզեցանք: 4. Լեգրանը անձնապես ոչ մեկ դեր չունի, հոն ներսը իրենց մեջ չգիտեմ, թեեւ ներսն ալ կարծեմ կարեւորություն ունեցող դեմք մը չէր. մեզի հանդեպ խողովակ մըն էր, որ կկատարեր կենտրոնեն եկած հրահանգները. հարցերու ըմբռնման մեջ նույն դիրքը ուներ, ինչ որ ուներ Մոսկվան մեր դեմ. համաձայնության գալու ջանք մը, Հայաստանեն Թուրքիա անցքը բանալու ջանք մը: 5. Լըգրանի հետ բանակցողը եղեր է մեր պատվիրակությունը, որը սակայն միշտ խորհրդակցություններ է ունեցեր կառավարության հետ, իսկ հիմնական պայմանները ստորագրելնես առաջ կառավարական խորհուրդին ներկա են եղած եւ իրենց հավանությունն են տված բոլոր կուսակցություններու ներկայացուցիչները: Սխա՛լ է թե համաձայնության չեկանք: Լըգրանի հետ լրիվ համաձայնություն գոյացած է. եւ երկու կողմեն բոլոր ծեւականությունները ստորագրված է եւ հիմնական համաձայնագիրը, եւ երկու գաղտնի հավելվածները. դեռ քեֆ ալ ենք կատարեր երկու պատվիրակություններս միասին մեր աշխատանքներու հաջող ավարտման առթիվ: Լեգրանը առավ մեր համաձայնագիրը եւ գնաց Բագու ամեն ջանք ի գործ դնելու ե որ ընդունիլ տա իրենց Բագվի ընկերներուն մեր փոխադարձաբար ընդունած կետերը. ուրկե ետքը մեր դաշնագրությունը պիտք է ստանար մեր կառավարություններու վավերացումը եւ պետք է հայտարարվեր: Եվ այդ բոլորը դարձավ ավելորդ Կարսի անկումով: 6. Ո՛վ է այդ Ա. Կարինյանը. գրական հետաքրքրություններով եւ «հարուստ» Մոսկվայի մոտերը ապրող երիտասարդ մըն էր. եթե ան է, բարեկամ էր մեզի, իր կողմեն վատ ոչինչ չեմ նկատած. արդեն վատ ի՛նչ կրնար ընել. խոսք տանի՛լ-բերել. մենք դիտմամբ մեր բոլոր քարտերը բաց էինք պահած. իսկ այն քարտերը որ բանալ չէինք կրնար, չէինք բացած եւ ոչ մեկուն: Այդ անունը կա հիշողությանս մեջ, բայց չեմ հիշեր թե ով է: Եթե Բագվի խումբին կպատկաներ կրնա իրենց ժողովներու մեջ իր դերը ունեցած ըլլալ: Ահա, սիրելիս, քու հարցարանի կարճ պատասխանները, չգիտեմ բանի մը պիտի ծառայեն թե ոչ հում վիճակին մեջ. ապահով եմ սակայն որ մնացածը դուն կեփես:

Մեջըն մեջ գրե ինծի, ի՛նչ աստիճանի լրջություն ունի Փարիզի մեջ օրաթերթ մը հրատարակելու Բյուրոյի մտադրությունը, քանի մը կողմերե լսեցի:

Այլեւ պիտի խնդրեի քեզմե անգամ մը Խատիսյանեն տեղեկանայիր ինչ եղավ Մարկոսյանի կտակի հարցը. Արժե որ դեռ հույս կապեմ այդ խնդրին, թե ապարդյուն աշխատանք է. կա այդ կտակի գործադրությունը, որեւէ մեկը մինչեւ հիմա ուսեր է այդ հաշվով. 1924-25 թվին որ եւ է մեկը ընդուներ է, իբրեւ նոր սան. եւ վերջապես առաջիկա տարվան համար ընդունելություն կա. խելքի մոտիկ է, որ իմ տղաս ընդունին ըլլա Սուրենը,– բժշկություն – ըլլա Վիգենը – էլեքտրական էնժինիոր–: Խոսել անգամ մը Խատիսյանի հետ եւ գրել ինծի քու մտածումը: Ես արդեն հույսս կտրեր էի մեր անցած տարվան ըրած դիմումեն, երբ Խատիսյանը Մարսեյլ եղած միջոցին նորեն հույս ձգեց մեջս. եւ հիմա չգիտեմ ինչ մտածեմ:

Շատ ու շատ բարեւներ քեզի, տիկնոջդ ու մեր ընկերներուն: Համբույրներով՝ Լեւոն Շանթ

1925 Մայիս 20, Մարսեյլ

Հ. Գ.

Աշոտը հոսկե անցնելու ժամանակ ըսեր է, որ դուն մեզի ուղարկելու ես իմ լուսանկարը՝ եթե ունիս ձեռքդ դրկել. տղաքս կխնդրեն:

Սիրելի՛ Սիմոն, ամենեն առաջ կետ-կետ պատասխանեմ տված հարցերուդ, թե եւ ատոնցմե մեկ քանիսին կարծեմ անցած նամակիս մեջ պատասխանած էի:

1.Մենք Վլատիկավկաս հասանք թե չէ ներկայացանք տեղի բոլշեւիկյան բարձր իշխանության, հասկցուցինք մեր ով եւ ինչացու ըլլալը եւ խնդրեցինք, որ մեզի վագոն տրամադրվի, որովհետեւ այդ երջանիկ օրերուն բոլշեւիկյան թագավորության մեջ մեր արդի իմաստով ո՛չ գնացքներ կային կանոնավոր երթեւեկով, ո՛չ ճամբորդի իր ազատ կամքի ոչ ալ գնովի տոմսակով, ոչ ալ երթեւեկող գնացքներուն մեջ տեղ ու վագոն. տեղ ունենալու համար կառավարութենեն պետք էր հատուկ իրավունք եւ կարգադրություն. մինչեւ Մոսկվա հեռագրվեց, մինչեւ պատասխան եկավ, մինչեւ վագոնի կարգադրություն եղավ անցան քանի մը օրեր. եթե մենք ալ մեր քեֆի համար կիրակի օր մը ավելի մնացինք կամ պակաս ան ալ արդեն չեմ հիշեր: Նույն պատմությունը նաեւ Ռոստով. հոն մեկ-երկու օր գոցե կարողանայինք ավելի արագ շարժվել. Տերտերյանի եղբայրը նոր մեռեր էր թիֆեն եւ ընկերս պետք է անգամ մը իրենց գյուղ երթար ու գար: Բայց այդպես օր մը ավելի շուտ կամ օր մը ավելի ուշի հարցը չկար մեր առջեւը դրած. մենք ո՛չ վայրկյան մը ավելի շուտ հասնելու տենդն ենք ունեցեր, ո՛չ ալ ավելորդ ժամանակ ենք վատներ, եւ ընդհանուր առումով մեր դանդաղ կամ արագ շարժվիլը մեզմե կախված չէ եղեր, այլ բոլշեւիկյան կարգերեն: Պետք չէ մոռնաս, որ Հյուսիսային Կովկասը այդ օրերուն Մոսկվայի հետ սոլիտ կերպով կապված երկրամաս մը չէր: Այս բոլորը ես գրեցի քեզի համար. իմ կարծիքով բոլշեւիկյան այս կարգի «ամբաստանություններուն» պատասխանելը զուր ժամավաճառություն է: Ի՛նչ կարեւորություն ունի, դիցուք շաբաթ մը ավելի շուտ հասած ըլլայինք, ի՛նչ էր փոխվելու. չէ՝ որ մեր հասնելեն ետքը ամբողջ երկու ամիս պարապ նստեցուցին մեզի այդ մեծապատիվ բոլշեւիկները իրենց ավերակ Մոսկվային մեջ. շաբաթ մը ավելի պիտի նստած ըլլայինք ահա բոլոր տարբերությունը:

2. Մեր կառավարությունը մեզի իբրեւ տիրեքթիվ տված էր երեք որոշում. ա.ռուսները պիտի ճանչնան մեր անկախությունը եւ գոնե սկզբունքով հակառակ ոչինչ չունենան թուրքական մասերու միացմանը մեր հողին. բ.բացարձակապես պետք է հարգեն մեր ազատությունը եւ մեր ներքին գործերուն չի պիտի խառնվին, ուրիշ խոսքով կոմունիզմի պահանջ պետք չէ ըլլա եւ գ. Զանգեզուրն ու Ղարաբաղը պետք է մտնե հայկական սահմաններուն մեջ. ծայրագույն պարագային համաձայնիլ Ղարաբաղի խնդիրը հանրահարցի միջոցով վճռելուն: Այս երեք կետերն ալ ռուսները անմիջապես ընդունեցին շատ թեթեւ առարկություններով. անոնց համար թուղթն ու ստորագրությունը երբեք կարեւորություն չէ ունեցած. նոր էին ստորագրեր վրացիներու հետ դաշինքը եւ մեր իսկ ներկայության կխնդային այդ դաշինքին վրա, «այո ամսվան մը համար» ինչպես կսեին կես կատակ, կես լուրջ: Եվ մենք արդեն գիտեինք, որ 9-րդ թե 11-րդ – լավ չեմ հիշեր – բանակը շարժման մեջ էր դեպի Վրաստան. լեհական պատերազմն էր, որ հետաձգեց Վրաստանի վրա հարձակումը:

3.Ռուսներու կողմեն մեզի առաջարկ չէ եղած Լըգրանի հետ ճամփորդելու մասին: Եթե ըլլար ալ մենք չէինք ընդուներ. մենք միշտ պահեր ենք մեզի իբրեւ անկախ երկրի մը անկախ դեսպանություն եւ ո՛չ մեկ պայմանով Լըգրանի մը թեւարկության տակը չէինք մտներ: Իսկ ետ դառնալու որեւէ հապճեպ չունենինք այդ աստիճանի. մենք մեր դերը արդեն ավարտած կհամարեինք, բոլոր էական խնդիրներու շուրջ մանրամասն զեկուցումներ դրկած էինք մեր կառավարության եւ կկարծեինք, որ Լըգրանի հետ մեր կառավարությունը ինքը կխոսի Հայաստանի մեջ մեր արտաքին գործերու

Նախարարը կամ անոր փոխանորդը: Ատկե զատ Նախիջեւանով անցնիլ կը ցանկայինք մեր կառավարության համար քանի մը միլիոն բերելու հաշիվներ ունեինք, այլեւ ընկերներ ունեինք սահմանը անցնելու. կային նույնպես ուրիշ մանր հարցեր: Նորեն այս բոլորը կը գրեմ միայն քեզի համար. թե չէ դեպի դուրս տալիք պատասխանս մեկ է. ռուս կառավարության կողմե մեզի առաջարկ եղած չէ, եւ եթե այդ առաջարկն եղած ալ ըլլար չէինք ընդունելու, պետք չունեինք ենթարկելու ինքզինքնիս այդ կարգի տիպլոմատիկ խաղերու: Իբրեւ ի՛նչ պիտի մտնեինք Լըգրանի վագոնները, իբրեւ դաշնակից – չէինք –, իբրեւ գերի, իբրեւ պատանդ: Սիրելիս, այս «նրբությունները» իհարկե չեն կրնալ հասկնալ մեր բոլշեւիկ աղբարները, որոնք անկախությունը ո՛չ ճաշակած են եւ ո՛չ ցանկացած. բայց մեր մեջ շատ ուժեղ էր այդ գիտակցությունը եւ այդ քաղաքացիական հպարտությունն ու քաղաքականությունը:

4. Թիֆլիսեն մինչեւ Մոսկվա մեզի հետ էին Երզնկյանն ու Փիրումյանը, մեր «դելեկացիոնը» վագոնի մեջ, ընկերներու նման, քանի մը դաշնակցական շատ մեղմացուցած քննադատություններե դուրս իբրեւ մեզի գաղափարակից. կուգային հատկապես Ղարաբաղը Հայաստանին կցելու համար աշխատելու. իբրեւ թե. պարզ էր, որ կուգային բոլշեւիկների հետ լեզու գտնելու, այն ժամանակ կմտածեի իրենց ղրկող մարմիններու կողմեն. իսկ հիմա կմտածեմ պարզապես իրենց անձնական կաշին: Մոսկվա հասնելուս պես իրարմե զատվեցանք. սկիզբները մեկ-երկու անգամ կուգային մեր դեսպանատունը եւ կհաղորդեին մեզի «բոլշեւիկյան տրամադրությունները», շատ երկրորդական ու անմեղ հաղորդագրություններ, քիչ-քիչ ատ ալ կտրվեցավ. եւ անոնք սահեցան վերջնականապես բոլշեւիկյան ծովին մեջ. ձուկը գտեր էր իր տարրը. եւ մեզի հետ այլեւս ոչ մեկ կապ. վերադարձեր են չգիտեմ երբ եւ ինչպես:

5.Ես Լըգրանի հետ ո՛չ մեկ կապ չեմ ունեցած Մոսկվայի մեջ, երեսն ալ չեմ տեսած. անգամ մը միայն Տերտերյանը գնաց մասնավոր տան մը մեջ մասնավոր կերպով հանդիպելու, իբրեւ պատահական տեսակցություն, գաղափարները շոշափելու համար: Մեզի հետ խոսողը արտաքին գործերու նախարարությունն էր, եւ անիկա մեզ Լըգրանի հետ բնավ հարաբերության մեջ չէ դրած պաշտոնապես. ուրեմն պաշտոնապես մենք չէինք ճանչնար Լըգրանը. մեր վերջին կամ վերջընթեր տեսակցությունների միջոցին էր, որ Կարախանը հայտնեց մեզի պաշտոնապես, որ իրենք Լըգրանը ուղարկած են Հայաստան հոն շարունակելու մեր «ընդհատած» խորհրդակցությունը: Նպատակն էր անգամ մը մուտք ունենային Հայաստան, հետները «ցրվելու» ապրանք էին տարած ժողովուրդը գրավելու համար, ինչպես եւ ահագին ,գրականություն եւ պերսոնել. այսինքն ներսեն քայքայելու ծրագիրը: Երբ մենք Թիֆլիս հասանք, Լըգրանը անգամ մը Թիֆլիս եկած եւ վերադարձած էր. ես հոն ալ իրեն չեմ հանդիպած. եւ եթե Թիֆլիս ալ ըլլար իհարկե իրեն չէի հանդիպելու, առանց մեր կառավարության նոր հրահանգին այլեւս իրավունք ալ չունեինք: Ես Լըգրանին առաջին անգամ տեսած ու խոսած եմ Երեւանի մեջ արտաքին գործերու նախարարության հարկին տակ, երբ մեր կառավարությունը որոշեց, որ Մոսկվա եղող կազմը շարունակե բանակցությունը Լըգրանի հետ:

6 եւ 7 հարցերուդ պատասխանելը դժվար է առանց մեր ընդարձակ համաձայնագրերը աչքի տակ ունենալու, մանավանդ որ ես մեծ վստահություն չունիմ իմ հիշողության վրա: Կրնամ պատասխանել միայն խոշոր գիծերով: Լըգրանի պահանջներն էին. ա.բացարձակ հրաժարիլ Վերսայլեն, Եվրոպայեն. բ. ազատ անցք տալ մեր հողերուն վրայով զենք ու ռազմամթերք անցնելու Ադրբեջանեն Թուրքիա եւ գ. թե մեկի, թե մյուսի եւ թե վրացիներու հետ մեր ունեցած վեճերը հարթիլ իրավարարությամբ ռուսներու արբիտրաժին տակ: Այլեւ քանի մը մանր պահանջներ, ինչպես օրինակ Կարսի մեջ գտնվող նեղ-գիծ երկաթուղային վագոնները հանձնել իրենց,–որպեսզի տան թուրքերուն, Ազրբեջանի եւ Թուրքիայի մեջ մեր հարավով երկաթուղային կապ հաստատելու համար:

Մենք ա. կետը կտրուկ մերժած ենք. անոնք քանի մը անգամ փոխեցին, փոխեցին եւ մնաց տակը անորոշ ու վերացական ոչինչ չըսող հայտարարություն մը: բ.կետի դեմ առարկեցինք, որ կվախնանք ռուսներեն ստացած զենքերը մեր դեմ գործածեն թուրքերը, ինչպես եւ թուրք բազմություններու մեր հողերուն վրա գտնվիլը: Վերջ ի վերջո համաձայնեցանք մեր զինվորական մարմիններու քննությունն ու վավերացումն ստանալե ետքը, որ 1. զորք կրնան անցնել երկաթուղիով որոշ ծոկված պայմաններու տակ, անզեն եւ փոքր-փոքր քանակությամբ. 2. իսկ գալով զենքին ռուսները ընդունեցին, ու ինչքան զենք որ անցնի մեր հողերուն վրայեն, անոր – լավ չեմ հիշեր – 25 թե՝ 30 տոկոսը պետք է մնա մեզի, իբր եւ ինքնապաշտպանության միջոց: Այդ երկու թիվերին վրա գիտեմ որ սակարկություն եղավ, վերջը որը մնաց չգիտեմ, կարծեմ 30-ը: գ. Կետը, այսինքը մեր երեք դրացիներու հետ վեճերը կարգադրելու համար ռուսներու արբիտրաժը ընդունեցինք:

Փոխարենը անոնք ընդունեցին մեր անկախությունը, մեր ներքին գործերուն չխառնվել, արեւելյան սահմանի մեջ պետք է մտներ Զանգեզուրը, իսկ Ղարաբաղի համար իրավարարություն, ինչպես եւ Նախիջեւանի համար, իբրեւ բալանս: Իսկույն պետք է միջամտեին թուրքերու հետ մեր պատերազմը կասեցնելու եւ իբրեւ առաջին պահանջ պիտի ստեղծեին չեզոք գոտի մը մեր ու թուրքերուն մեջ հին ռուսական սահմանին վրա. եւ այս բոլորը իբրեւ մեր ու թուրքերու ընդհանուր բարեկամ: Մեզի անմիջապես պետք է վճարեին 2 զ միլիոն ոսկի, Բագվի նավթային ճամբան պիտի բացվեր, պետք է տային երկրագործական գործիքներ, պետք է հանձնեին Մոսկվայի մեջ մեր էջմիածնական եւ այլ ինչքերը, դյուրություններ պիտի տային ռուսական քանի մը կենտրոններու մեջ հավաքված հայ գրենական եւ գեղարվեստական երկերը Հայաստան փոխադրելու: Ահա խոշոր գծերով եւ ինչ որ հիմա կրնամ հիշեր, ինչ որ երկու կողմեն ստորագրած ենք:

8. Լըգրանը սաստիկ կշտապեր մեր բանակցությունների միջոցին, մենք քիչ մը ծանր կշարժեինք, ականջնիս Կարսի կողմը: Ստորագրելուն պես Լըգրան գնաց ինքը, մեր կողմեն ոչ մեկ առաջարկ, համոզելու Բագուի ընկերները, որ ընդունին մեր եկած համաձայնությունը. նույնը նաեւ պիտի աշխատատեր թուրքերուն հետ: Բայց թե մեր կառավարությունը, թե մեր զինվորականները, թե անգլիական ներկայացուցիչը կզարմանային բոլշեւիկներու այդ տեսակ պայմաններ ստորագրած ըլլալուն. կա՛մ թուրքերը չէին ճանչնար ինչպես հարկ է, կամ մեզի օրորել կուզեին, կամ վստահ էին որ անգամ մը Հայաստանի մեջ ոտքերնին դնելե ետքը, ամեն ինչ կպայթեցնեին. գուցե եւ այս երեքը միասին: Եվ վերջապես եղածը թուղթի կտոր մըն էր եւ դատարկ ստորագրություն մը, ի՛նչ կարեւորություն:

9. Լըգրանի դիրքը երկդիմի էր. մեզի, այսինքն մեր կառավարության հանդեպ լիազոր բանագնաց մըն էր, մոտավորապես ինչպես մենք էինք Մոսկվա. բայց անտարակույս է, որ բոլշեւիկյան մարմիններու հանդեպ անիկա ուներ մասնավոր իրավունքներ ու հրահանգներ թե՝ Հայաստանի մեջ եւ թե՝ Հայաստանից դուրս Հայաստանի հետ կապված գործերու վերաբերմամբ, որ ըսել է գրեթե ամեն հարցի վերաբերմամբ Կովկասի մեջ:

Լեւոն Շանթ

10. Իր թուրքերու հետ ունեցած կապի մասին ոչինչ ըսել չեմ կրնար: Կհիշեմ, որ Երեւանի մեջ շատերը – կամ գոնե քիչերը – կային, որ անոր վրա կնայեին իբրեւ պատերազմական լրտեսի վրա մեր շարքերու թիկունքին: Ես բոլշեւիկ մարդոց խոսքին ու կեցվածքին մեծ հավատք ունեցող մարդ մը չեմ. եւ վերջապես քաղաքականությունը սուտի ու խաբեության հյուսվածք մըն է. չեմ զարմանար, որ Լըգրանը թուրքերու առաջխաղացումը դյուրացնելու եւ մեզի ճզմել տալու քաղաքականությունը վարած ըլլա, կա՛մ իր, կա՛մ Բագուի, կա՛մ Մոսկվայի թելադրանքով. բայց անկեղծ ըլլալու համար պետք է ըսեմ, որ ես այդ աչքով չեմ նայած անոր վրա. կարելի է իմ տիպլոմատիկ հոտառությունն թույլ է եղած – մանավանդ կեղտոտ գործերու մեջ. իմ տպավորությունս այն էր, որ ան կջանար իրոք որ հաշտության բերեր մեզի ու Բագուն, մեզի ու թուրքերը: Ինծի կթվի, որ Լենինը կողմնակից էր Հայաստանի մնալուն, նույնիսկ ո՛չ բոլշեւիկյան. ինծի կթվի, որ Կարախանը նմանապես այդ ուղղությամբ կաշխատեր. ինծի կթվի որ ներքին կապ կար Լըգրանի ու Կարախանի մեջ: Լենին – Կարախան – Լըգրանյան քաղաքականությունը պարտվեցավ մեր Կարսի առջեւ ունեցած պարտությամբ. հաղթանակեց բագույան քաղաքականությունը, «բոլշեւիկ Հայաստան անմիջապես» զենքով, եւ Հայաստանի կառավարությունը իրենց ձեռքը հայ բոլշեւիկներու: Ինծի կթվի, որ Աշ. Հովհաննիսյան ու Սահակ Տեր-Գաբրիելյանը Կարախան-Լըգրանյան խելքի մարդիկներեն էին եւ ճիշտ ատոր համար ալ դրված էին Լըգրանի հետ: Վերջը ատոնք բնականաբար բոլորն ալ փոխվեցան, երբ Բագուի բոլշեւիզմը տարավ հաղթանակը: Ատոնք կամ պետք է սկսեին ջուրին տակ կամ պետք է բագուցիներու հանկերգը պոռային: Մեկ երկուքը, որ ավելի խոր հոգի ունեին, լռեցին ու անցան երկրորդական շարքերը. մյուսները նետվեցան առաջ, Ա. Հովհաննիսյանին պես, խոշոր պատառներ խածնելու համար: Մեր Կարսի կռիվներուն ժամանակը գիտեմ որ – բոլորովին կողմնակի ու մասնավոր ճամբով – թե Աշոտը եւ թե Սահակը կցանկանային Կարսի առաջ մեր զինական հաջողությունը. դեռ հայ էին:

Եթե Կարինյանը Փափազյանի քեռորդին է, իմ անցած օրվա գրածներս անոր չի վերաբերիր: Ան ուրիշ մարդ է: Փափազյանի քեռորդին գիտեմ, թեեւ դեմքը չեմ հիշեր. ոչ ալ հոգին կճանչնամ:

Սիմոն ջան, վերջացնելես առաջ երկու խոսք ալ իմ մասին: Գիտցած եղի՛ր, որ Մարսիլիա մնալու չեմ: Ո՛չ մարդ կա հոս մարդավարի, ո՛չ ալ դրամ, եթե մեկը ըլլար՝ կըլլար եւ մյուսը. այնպես որ ո՛չ իմ ծրագիրներս ո՛չ ալ իմ ապրուստս ոտքի հանել չեմ կրնար հոս: Վերջին ամիսները շատ դժվար կվճարեն եւ շատ ողորմելի մարդիկ են. չգիտեմ ամառվան ամիսներու վճարը ինչ պիտի ընեն. կրնաս երեւակայեր դրամական վիճակս: Մտադիր եմ Եգիպտոս անցնելու, դեռ պաշտոնական հրավեր չունիմ, բայց մասնավոր նամակներու հենված հույս ունիմ, որ հաջողվի: Ընտանիքս պետք է փոխադրեմ Փարիզ. այդ մասին արդեն գրած եմ Տիգրանին, որ բնակարանի հոգը քաշե: Եթե հնար ունեցա եւ եթե շուտով բնակարան ճարվի մեկ-երկու շաբաթ ես ալ կուգամ Փարիզ Եգիպտոս մեկնելես առաջ. եւ այն ժամանակ կխոսինք մանրամասն, եթե գալ չկարողանամ, քեզի իրազեկ կպահեմ:

Սրտագին բարեւներով ու ջերմ համբույրներով Լեւոն Շանթ

1925 հունիս 18, Մարսեյլ(Ս�վ, ՀՀ, էջ608-615):

ՀԱՎԵԼՎԱԾ

Էլ ի՞նչ պետություն առանց դրոշի, զինանշանի եւ օրհներգի, որոնց շուրջ այսօր եւս քննակումները չեն դադարում: Այս կապակցությամբ դեռեւս շարունակենք:

Դրոշը: Դիմենք անմիջական սկզբնաղբյուրին. «Հաստատվեց Հայաստանի ազգային դրոշակը հորիզոնական կարմիր, կապույտ ու նարնջի գույներով: Դրոշակի ձեւի եւ գույների շուրջ եղան բավական երկար խորհրդակցություններ. ի նկատի առնվեցին հայոց պատմական դրոշակները, լսվեց հայկաբան Ստ. Մալխասյանի հիմնավորված զեկուցումը հայկական դրոշակի մասին եւ, ի վերջո, որոշվեց ընդունել վերոհիշյալ երեք գույները պայմանով, որ վերջնական հաստատումը կատարվի Սահմանադիր Ժողովի կողմից, որը պետք է գումարվեր Հայաստանի երկու հատվածների միացումից հետո: «...»: Առանձին պատգամավորներ իրենց մտքում ունեին, անշուշտ, որոշ բացատրություն, ոմանք ճառով էլ արտահայտեցին, բայց Հայ. Խորհուրդը այդ մասին որեւէ որոշում չտվեց, եւ դրոշակն իր ամբողջության մեջ, գույների ընտրությունն ու դասավորությունը, ավելի շուտ, արդյունք էր քվեարկության պատահականության: Պատգամավորների մի մասի կողմից մասնավոր առարկություն էր լսվում – մասնավորապես գործնական տեսակետից – նարնջագույնի դեմ – Հայաստանում դժվար էր այդ գույնի կտոր գտնել: Առաջարկվում էին փոխարենը դնել կանաչ գույն. ոմանք փաստ էին բերում, որ կանաչը մեր պատմական գույներից մեկն է: Բայց նարնջի գույնը առանձնապես պաշտպանում էր Քաջազնունին, որ ղեկավարվում էր սոսկ գեղագիտական նկատառումներով. կարմիրի, կապույտի եւ նարնջագույնի ներդաշնակությունը դուր էր գալիս նրա ճաշակին:

Կային, սակայն հայկական եռագույնի մեջ եւ գաղափար ու խորհուրդ դնողներ: Այդ գույները, կարծես, բխում էին մեր կյանքից, խորհրդանշում էին հայ պետականության ծագումն ու ապագան: Կարմիրը հայ ժողովրդի թափած արյունն էր. կապույտը Հայաստանի կապույտ երկինքը եւ նարնջի կամ ոսկու գույնը խտացումը աշխատանքի: Հայ ժողովուրդը, որ արյունով էր ձեռք բերել իր ազատությունը, հայրենի կապույտ երկնքի տակ, իր համբավավոր աշխատասիրությամբ պիտի վերաշիներ երկիրը եւ ապրեր ազատ ու երջանիկ» (ՍՎ, ՀՀ, էջ 183):

Զինանշանը: 1920-ի «Հուլիսին կառավարությունը հաստատեց ակադ. Ալ. Թամանյանի կազմած եւ նկարիչ Կոջոյանի գծած Հայաստանի պետական զինանշանի (գերբի) նախագիծը: «...»: Այս զինանշանը լուրջ առարկություններ հանդես բերեց թե կառավարության մեջ եւ թե դուրսը: «...»: Եվ, վերջապես, զինանշանը չէր գոհացնում մարդկանց գեղասիրական ճաշակին: Իր մեջ պարունակում էր շատ կենդանիներ. «կատարյալ գազանանոց» սրախոսում էին ոմանք: Բայց եւ այնպես, կառավարությունը հաստատեց ներկայացված նախագիծը, որովհետեւ պատմական կամ գեղագիտական ուսումնասիրություններ անելու ժամանակ չկար: Հաստատեց ժամանակավոր կերպով, մինչ եւ Սահմանադիր Ժողով, ինչպես եւ պետական դրոշը, բնականաբար» (ՍՎ, ՀՀ, էջ 436):

Հայոց պետականության ոգին խորհրդանշող դրոշի, զինանշանի, ինչպես նաեւ օրհներգի մասին մենք դեռեւս պետք է մտածենք. չմոռանանք՝ նախկինում ամեն ինչ արվել է շտապողականության պայմաններում եւ ժամանակավոր բնույթ է կրել:

Լեզվական մի առանձնահատկության մասին: Մենք գերատեսչությունների ղեկավարին ասում ենք նախարար, իսկ նախարարների ղեկավարին՝ վարչապետ: Եթե նախարար, ուրեմն նրանց գլխավորը պետք կոչվի նախարարապետ, իսկ եթե վարչապետ, ապա նրա ենթակաները պետք է կոչվեն վարիչներ (մի բան, որ ժամանակին առաջարկում էր Նիկոլ Աղբալյանը): Հիմա, Վրացյանը երկու անգամ վարչապետի փոխարեն օգտագործում է նախարարապետ եզրույթը: Նախարարապետ ստորագրել է նաեւ Օհանջանյանը (էջ 490-491, 605):

Լեզվական այս ճշգրտումներն այսօր անհրաժեշտ են նաեւ մեզ:

Պատմության խորքերը հետազոտող գիտնականի ուսումնասիրությունների ընդրանին

Վաստակաշատ պատմաբան, պրոֆեսոր, Երեւանի պետական համալսարանի, Վազգենյան եւ Գեւորգյան ճեմարանների, Բեյրութի Համազգային բարձրագույն դասընթացների անփոխարինելի բարձրակարգ դասախոս, հազարավոր սաներ կրթած ու ազգային հոգեւոր-բարոյական բարձր չափանիշներով դաստիարակած երանելի ուսուցչապետ Պետրոս Հովհաննիսյանը (1944-2016 թթ.) բարձր եւ մնայուն անուն է նաեւ գիտության անդաստանում: Նրա գիտական ժառանգության ընտրանին լույս է տեսել վերջերս, «Հայագիտակ» հրատարակչության կողմից՝ «Պատմագիտական ուսումնասիրություններ» վերնագրով:

Գրքի առաջաբանում («Գիտության եւ կրթության մեծ նվիրյալը») ճանաչված գրահրատարակիչ Ա.Իսոյանը բացառիկ նրբագծերով է ներկայացնում Պ.Հովհաննիսյանի գրքասիրությունն ու գրքապաշտությունը՝ իրավացիորեն նշելով, որ գիտնականն իր տունը վերածել էր գրքի անառիկ ամրոցի:

Գրախոսվող սույն ժողովածուն աներկբա վկայում է, որ Պ.Հովհաննիսյանի գիտական նախասիրությունների եւ հետաքրքրությունների շրջանակը բավական լայն է, տարողունակ եւ բազմաբովանդակալից:

Նախ սկզբից եւեթ ընդգծենք, որ Պ. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների առանցքում մեծն Մովսես Խորենացին է՝ հայ դասական պատմագրության հիմնադիրը, չափանիշն ու ուղենիշը:

Առհասարակ, հայ պատմիչների կյանքի, գործի եւ գործունեության վերաբերյալ նրա վերաբերմունքը հասնում է գրեթե մի սրբազան երկյուղածության: Նա հրաշալի պատկերացնում, գնահատում եւ իմաստավորում է միջնադարի հայ պատմիչների թողած գրական ժառանգության արժեքը հայության մտավոր եւ հոգեւոր մշակույթի վերելքի եւ առաջադիմության գործում: Ահա թե ինչու Պ. Հովհաննիսյան հայ գիտնականը իր կյանքի մի զգալի մասը նվիրել է հայ պատմիչների եւ պատմագիտական մտքի խորքային ուսումնասիրությանը: Նրա գրչի ներքո նորովի են բացահայտվել միջնադարյան Հայաստանի եւ Կիլիկիայի պատմագիտական մտքի երեւելի դեմքերը՝ Կորյուն Վարդապետը, Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Եղիշե Վարդապետը, Ղազար Փարպեցին, Սեբեոսը, Հովհան Մամիկոնյանը, Ղեւոնդ Վարդապետը, Հովհաննես Դրասխանակերտցին, Անանուն պատմիչը, Թովմա Արծրունին, Արիստակես Վարդապետ Լաստիվերտցին, Դավիթ Ալավկաորդին:

Իհարկե, սույն պատմիչների շարքում նա առանձնակի ուշադրություն է հատկացրել պատմահայր Մովսես Խորենացուն, որի ցայտուն վկայությունն են նաեւ սույն ժողովածուի մեջ զետեղված գործերը (Մովսես Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար առաջին թարգմանությունը, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ֆրանսերեն թարգմանությունները, Հենրիկոս Բրեենները եւ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» լատիներեն համառոտագրված առաջին թարգմանությունը, Մովսես Խորենացին օտար թարգմանություններով): Միանգամայն տեղին եւ իրավացի է նրա խորքային այն դիտարկումը, ըստ որի հայ հին հեղինակներից եւ ոչ մեկի երկասիրությունն այնքան խոր ազդեցություն չի թողել հայ պատմագիտական ու հասարակագիտական մտքի վրա, որքան Խորենացու «Հայոց պատմությունը», որով կրթվել ու դաստիարակվել են բազում սերունդներ:

Հայ պատմիչներին նվիրված նրա գործերն աչքի են ընկնում սկզբնաղբյուրային վավերագրերի խոր իմացությամբ, պատճառահետեւանքային կապերի խոր ընկալումով, պատմահամեմատական մեթոդների ու բնութագրերի հստակ կիրառումով:

Պետրոս Հովհաննիսյանն իր գիտական հետաքրքրությունների «թիրախ» ընտրեց ոչ միայն միջնադարյան շրջանի հայ պատմիչներին, այլեւ նրա գիտական պրպտումների հոլովույթում հայտնվեցին նոր եւ նորագույն շրջանի հայ պատմաբանները (Ղեւոնդ Ալիշան, Աստվածատուր Խաչատրյան (Խաչ), Ավետիս Պերպերյան, Հակոբ Մանանդյան, Հովհաննես Հակոբյան (Վարդ Շահենի), Գառնիկ Գյոզալյան, Ռուբեն Աբրահամյան, Գրիգոր Միքայելյան, Հայկազ Ժամկոչյան, Աշոտ Աբրահամյան, Հրանտ Արմեն, Հակոբ Զորյան, Աշոտ Հովհաննիսյան): Սույն պատմաբանների կյանքի եւ գործի ուսումնասիրությանն է նվիրված ժողովածուի երրորդ բաժինը: Փաստառատ դիտարկումներով ու անաչառ կեցվածքով նա կերտել է

մեզանում հայտնի եւ քիչ հայտնի այս պատմաբանների գիտական անեղծ դիմանկարը:

Չորրորդ բաժինն ամբողջությամբ նվիրված է 20-րդ դարի հայ ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցին: Վերջինիս բնութագրում է որպես վիթխարի անհատականության եւ հայ բյուզանդագիտության հիմնադիրի: Մի շարք հոդվածներ («Տիգրան Մեծի գործունեության լուսաբանումը Նիկողայոս Ադոնցի աշխատություններում», «Մովսես Խորենացի եւ Նիկողայոս Ադոնց», «Մարզպան Վասակ Սյունեցու գործունեության վերագնահատման Նիկողայոս Ադոնցի տեսությունը», «Նիկողայոս Ադոնցի «Հայոց քննական պատմության» ճակատագիրը», «Նիկողայոս Ադոնցի կրոնագիտական ժառանգությունը», «Նիկողայոս Ադոնցի նամականին», «Նիկողայոս Ադոնցի կենսապատումների արդիականությունը» եւ այլն) հիմնավոր խորությամբ ներկայացնում են նշանավոր հայագետի ստեղծագործական ճանապարհի կարեւորագույն փուլերն ու հանգրվանները: Մեզանում ոչ ոք այդպես չի խորացել Ադոնցի ստեղծագործական, գիտական ժառանգության գաղտնիքների մեջ, ինչպես դա կարողացել է անել Պ. Հովհաննիսյանը: Ժողովածուի հինգերորդ բաժինը ներկայացնում են Հայ Առաքելական եկեղեցուն եւ նրա վաստակառու գործիչներին նվիրված ուսումնասիրությունները (Փիլիպոս Ա.Աղբակեցի, Վահրամ եպիսկոպոս Մանկունի, Կարապետ Տեր-Մկրտչյան, Ամենայն հայոց կաթողիկոս Տ.Տ. Գեւորգ Կոստանդնուպոլսեցի, Սուքիաս արք. Պարգյանց, Տ.Սահակ վրդ. Ամատունի, Վահան Ծ վրդ. Բաստամյանց, Ամենայն հայոց կաթողիկոս Տ.Տ. Մակար Ա Թեղուտցի Տեր-Պետրոսյան, Տ. Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյան):

Հատընտիրի վեցերորդ բաժնում «Մատենագիտություն» խորագրի ներքո ներկայացված են գիտնականի մատենագիտական գործերը՝ նվիրված Մ.Խորենացուն, հայկական հարցին եւ հայոց ցեղասպանության պատմությանը, Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն կաթողիկոսի կյանքին եւ գործունեությանը եւ այլն: Այս ամենով հանդերձ, այնուամենայնիվ, պետք է հատուկ դրվատանքով ու արժեւորումով արձանագրենք, որ Պետրոս Հովհաննիսյան գիտնականի եւ ուսուցչապետի լավագույն գործերը վերաբերում են հայ ազգային-ազատագրական շարժման ուսումնասիրմանը, կարեւորմանն ու իմաստավորմանը: Հայ պատմագիտության էջերում բազմիցս գրվել է հայ ազատագրական շարժման մասին եւ այդ ծավալուն գրականության մեջ Պ.Հովհաննիսյանը կարողացել է ասել իր թարմ խոսքն ու հաստատել իր ասելիքը: Անհագ հետաքրքրությամբ է կարդացվում «Հայ ազատագրական շարժումները XV դար-XVII դարի վերջ» ստվարածավալ ուսումնասիրությունը, որում նա նորովի հայացք է նետում հայ ազատագրական շարժման նախաքայլերին եւ նախադրյալներին, համոզիչ հիմնավորումներով ներկայացնում հայ ազատագրական շարժման շուրջ դարերով ձեւավորված լեգենդը:

Այս ամենին որպես ամփոփում հավելենք, որ ընթերցողի գրասեղանին դրված տաղանդաշատ, բազմաշնորհ պատմաբան, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի տասնամյակներ շարունակ կատարած պրպտուն ուսումնասիրությունների ընտրանին աչքի է ընկնում գիտական բարձր մակարդակով, պատմական երեւույթները վերլուծելու, պարզաբանելու եւ իմաստավորելու տեսական, լայն ընդգրկուն պատրաստվածությամբ:

Ժողովածուում ընդգրկված նյութերը, հոդվածները, ակնարկներն ու ուսումնասիրությունները պերճախոս կերպով վկայում են նրա հեղինակի՝ բազմադարյան հայոց պատմության տարբեր փուլերի, պատմաշրջանների եւ բազմապիսի երեւույթների խորքային ու բացառիկ իմացության մասին:

Սույն հատընտիրը, իրոք, մի յուրահատուկ հուշարձան է կյանքին, ցավոք, արդեն հրաժեշտ տված հայրենասեր ու հայրենանվեր մարդու, տքնաջան գիտնականի եւ անկրկնելի ուսուցչի հիշատակին:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

«Քաջարան» ոսկի հուշամեդալ՝ Սյունյաց սրբազան հողը պաշտպանելու համար

էջ 1

Պարզվում է, սակայն, որ Քաջարան քաղաքն ունի նաեւ «Քաջարան» ոսկի հուշամեդալ՝ հիմնված 2017-ի օգոստոսին:

Հիանալի է, որ Քաջարանի տեղական իշխանությունը նման մեդալ է հիմնել. ինչո՞ւ պետք է բոլորը սեփական մեդալներ ունենան, իսկ Քաջարանը չունենա:

Սակայն Քաջարանի համայնքային իշխանության հրապարակած փաստաթղթերում չգտանք նման մեդալ հիմնելու մասին ավագանու որոշում, չգտանք նաեւ մեդալի կանոնադրությունը, որի մեջ, որպես կանոն, առնվազն գրված պիտի լինի, թե ում եւ ինչ ծառայությունների կամ վաստակի համար կարելի է շնորհել «Քաջարան» ոսկի հուշամեդալը:

Ողջամիտ կլիներ, որ Քաջարանի համայնքապետը հրապարակման ներկայացներ ե՛ւ ավագանու համապատասխան որոշումը, ե՛ւ մեդալի կանոնադրությունը, որպեսզի հարցն իրավացիորեն շահարկումների տեղիք չտար:

Հաջորդ եւ ոչ պակաս կարեւոր հարցը՝ ո՞ր մի արժանիքի, ո՞ր մի ծառայության, ո՞ր մի վաստակի համար է Վահեն պարգեւատրվել այդ մեդալով:

Այդ մասին, ինչպես տեղեկացնում են քաջարանցիները, բառ անգամ չի ասվել 2017-ի օգոստոսի 21-ին՝ մեդալը հանձնելիս:

Մնում է ենթադրություններ անել, որը, սակայն, մենք չենք անի առայժմ՝ համոզված լինելով, որ Քաջարանի համայնքապետը հանրությանը կասի, թե ինչո՞ւ Վահե Հակոբյանին մեդալ տվեց:

Ծագած հարցերը շատ բնական են. ի վերջո Սյունիքի մարզպետին մեդալ է շնորհվել, եւ մենք՝ սյունեցիներս, ուզում ենք

Լուսանկարում՝ Մանվել Փարամազյան

ուրախանալ, հպարտանալ, թեկուզ եւ ուշացումով շնորհավորանքի խոսք հղել նրան, բայց... Չգիտենք, թե ինչ մեդալի մասին է խոսքը:

Այնպես որ՝ սպասում ենք բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումների, հակառակ դեպքում ստիպված կլինենք եզրակացնել, որ Վահե Հակոբյանին մեդալ է տրվել Մանվել Փարամազյանին համայնքի ղեկավար նշանակելու, տեղացի կադրերին ծաղրուծանակի ենթարկելու եւ ասպարեզից դուրս մղելու, Քաջարանի կոմբինատի՝ պետությանը վճարած հարկերը միայն մեկ տարում 29 մլրդ դրամ պակաս վճարելու, Սյունիքի սրբազան հողը պղծելու համար:

Չմոռանանք ասել՝ «Քաջարան» մեդալի շուրջ այս պատմությունն աննախադեպ է մեկ այլ առումով եւս. Սյունիքի հազարամյակների պատմության մեջ սա առաջին դեպքն է, երբ մեր երկրամաս ներխուժած հրոսակին ինքներս ենք մեդալ շնորհում:

Եվ դա արեց Մանվել Փարամազյան անուն իշխանավորը՝ բացառապես իր անձնական շահերից ելնելով:

Դա գրվելու է Սյունիքի նորագույն պատմության մեջ եւ հիշվելու է սերնդեսերունդ, եւ մեր հաջորդներն անեծք են ուղղելու մեզ (իրենց նախնիներին)՝ սովորական մի գաղութարարի մեդալ տալու համար...

Չէ, եկեք առաջ չընկնենք եւ սպասենք պարզաբանումների:

Իսկ խնդիրը բարձրացրած քաջարանցիների անունը չենք հրապարակում՝ ձգտելով նրանց կյանքը վտանգի չենթարկել, ձգտելով նրանց չզրկել աշխատանքից եւ չդարձնել հետապնդումների թիրախ:

Սամվել Ալեքսանյան

Մարզպետը փորձում է իր անձին ենթարկեցնել հաշմանդամության թոշակների նշանակման գործընթացը եւս

Ապրիլի 17-ին Սյունիքի մարզպետարանում տեղի է ունեցել մի սինկլիտ, որը երիցս վկայեց Սյունիքի մարզպետի հոգեվարքային վիճակի մասին:

Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում Սյունիքի մարզում տիրող իրավիճակի քննարկումը, որ նախաձեռնել էին բժշկասոցիալական փորձաքննության գործակալության ներկայացուցիչները, կարելի էր եւ բնականոն ու օրինաչափ համարել, բայց…

Իրոք որ այդ ոլորտում (հանրապետության մասշտաբով) տարիների ընթացքում կուտակվել են բազմաթիվ խնդիրներ: Եվ դրանք՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ու ԲՍՓ գործակալության թողտվության, նաեւ թելադրած սցենարի հետեւանքով:

Հետեւաբար՝ եթե իսկապես ուզում ենք կարգուկանոն հաստատել մարզերի բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում, ապա դա պետք սկսել ԲՍՓ գործակալությունից: Այնպես որ՝ Երեւանից ժամանած ինչ-որ Նունե Շահվերդյանի ու Անուշ Սիմոնյանի ելույթներն ապրիլի 17-ի ժողովում եւ Վահե Հակոբյանի ընտանեկան հեռուստատեսությամբ, համարում ենք սովորական բեմադրություն, որն, ի վերջո, ձախողվեց դերասանների չափից ավելի շպարված լինելու պատճառով:

Ավելին, վերջին շրջանում երկու անգամ գալով մարզ, գործակալության պետի տեղակալ Նունե Շահվերդյանն ամեն ինչ արեց, որ բժշկասոցիալական փորձաքննությունը Սյունիքում պատվաստի Վահե Հակոբյանի անձնական քմահաճույքների ծառին:

Արտառոցը, սակայն, դա չէ միայն: Նույն խառնաժողովում մարզպետը հայտարարեց, թե ողջունում է հանձնաժողովի ամբողջ կազմի հրաժարականը, թե մարզպետարանի առողջապահության վարչությունն այսուհետ խոշորացույցի տակ է պահելու մարզի բժշկասոցիալական փորձաքննության նոր հանձնաժողովի գործունեությունը՝ ավելացնելով. **«Մենք շատ ուշադիր ենք լինելու, որ վերականգնվի մարզի բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի բարի համբավը»:**

Ամոթ, շատ ամոթ… Տեսեք, թե ով է առանց գետինը մտնելու բարի համբավ բառակապակցությունն օգտագործում:

Մինչդեռ, մարզպետը Հայաստանի Հանրապետության որեւէ օրենքով կամ ենթաօրենսդրական ակտով լիազորություն չունի վերահսկելու, միջամտելու բժշկասոցիալական փորձաքննությանը, ասել է թե՝ մարզպետը հերթական անգամ քիթը խոթում է մի ոլորտ, որտեղ ինքը որեւէ իրավունք կամ պարտականություն չունի:

Տեղի ունեցածը գնահատում ենք որպես մարզպետի հերթական կամայականության եւ ինքնիրավչության լկտի դրսեւորում: Մարդիկ համոզմունք են հայտնում՝ եթե Վահեն առնչություն ունենա մարզում իրականացվող բժշկասոցիալական փորձաքննությանը, մեծանալու են կոռուպցիոն ռիսկերն այդ ոլորտում: Նրա պաշտոնավարման ամբողջ ժամանակաընթացքը դրա պսպղուն ապացույցն է. որտեղ կա Վահե Հակոբյանի ներկայությունը, այնտեղ անկեղծության, մաքրության, ազնվության, պետականության մասին խոսք լինել չի կարող:

Մեզ զարմացնում է նաեւ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետի տեղակալ Նունե Շահվերդյանի եւ նրա նախարարի անդեմ ու անսկզբունք պահվածքը վահեհակոբյանական այդ խաղում:

Ի դեպ, Սյունիքի մարզային բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովն ամբողջ կազմով կամավոր հրաժարական է տվել, մայիսից կգործի նոր հանձնաժողովը: Մինչ այդ մարզում աշխատանքները կիրականցնի Վայոց ձորի մարզային հանձնաժողովը:

Տարօրինակն այն է, որ մի ամբողջ մարզի հանձնաժողով լրիվ կազմով հրաժարական է տալիս, իսկ նախարարը չի զարմանում՝ ինչո՞ւ է հանձնաժողովն ամբողջ կազմով կամավոր հրաժարական տալիս:

Այո, ստեղծված ոչ սովորական իրավիճակի վրա ենք հրավիրում ՀՀ աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարի ուշադրությունը:

Նախարարին հիշեցնում եւ զգուշացնում ենք նաեւ՝ Սյունիքի բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի բարի համբավը վերականգնելու միակ ճանապարհը գործող մարզպետին այդ ոլորտից

կիլոմետրերով հեռու պահելն է, մանավանդ որ ինքը պետական նման լիազորություն չունի:

Սյունիքի բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի շուրջ տեղի ունեցող մարզպետական խեղկատակությունն այդքան արտառոց չէր համարվի, եթե այն տեղի չունենար մեր հանրապետության ներքաղաքական կյանքի՝ վերջին տարիների ամենալարված ժամանակաշրջանում:

Ներքաղաքական լարված օրերին (հավատարիմ մնալով կրիտիկական իրավիճակներում թաքնված մնալու եւ ստույգ դիրքորոշում չհայտնելու, սեփական կուսակցության քաղաքական գիծը բացեիբաց պաշտպանելուց խուսափելու իր ավանդական պահվածքին) մարզպետն այդ արհեստական ժողովում իր սֆաթը ցուցադրելով փորձեց կենդանի լինելու նշաններ ցույց տալ:

Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի շուրջ ծավալված իրադարձություններում մարզպետի անձնական շահագրգռվածությունը, սակայն, դրանով չի ավարտվում:

Ամիսներ շարունակ նա աշխատանք է տարել պաշտոնանկ անելու եւ վարկաբեկելու այդ հանձնաժողովի նախագահիհ՝ Անուշ Օրբելյանին, Կապանի ամենավառ անհատականություններից մեկին, ճանաչված ու հարգված բժշկուհուն, ով Սյունիքի արժանապատվության համար կանգնած Սմբատ Օրբելյանի կինն է: Ի դեպ, այդ ընտանիքի հետ դատական երկու գործով վեճի մեջ է մարզպետը, երկու գործի քննությանն էլ խուսափում է մասնակցել՝ վախենալով հրապարակավ խայտառակումից: Հետապնդելով հանձնաժողովի նախագահիհ՝ փորձել է դրանով եւս մեկ հարված հասցնել այդ ընտանիքին՝ իր քինախնդրության եւ վրեժխնդրության ծարավին գոնե մի քիչ հագուրդ տալու համար:

Հիմա մի բան է մնում. տեսնենք, թե ում է մարզպետը երաշխավորում հանձնաժողովի նախագահի պաշտոնում:

Նրա պաշտոնավարման ամբողջ ընթացքի կադրային քաղաքականությունը հաշվի առնելով ենթադրում ենք, որ հանձնաժողովի նախագահ կերաշխավորի մեկին, ով անպայման հանցավոր անցյալ կամ մերժելի վարքագիծ ունի, որպեսզի կարողանա հանձնաժողովի գործունեությունը ենթարկեցնել իր անձին:

Հանձնաժողովի նախագահի պաշտոնում նրա երաշխավորած թեկնածուի դիմանկարին կանդրադառնանք առաջիկայում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Թե ինչպես էր տխրահամբավ մարզպետն ուղղաթիռում աքլոր կտրել

Ինչպես արդեն հաղորդել ենք, հանրապետության ներքաղաքական կյանքի ամենալարված օրը՝ ապրիլի 17-ին, երբ մայրաքաղաքում ուղղակի փողոցային մարտեր էին ընթանում, երբ Ազգային ժողովում վճռվում էր երկրի հետագա ընթացքի ուղիների որոշարկման հարցը, տխրահամբավ Վահե Հակոբյանը շարունակում էր սյունեցիներին նվաստացնելու, իր անձնական հակառակորդներից (պետության անունից) վրեժ լուծելու լկտիությունը:

Անգամ այդ օրը նա չհրաժարվեց ցինիկ պահվածքից եւ կեսօրի կողմերին Կապան եկավ ուղղաթիռով՝ շատ լավ իմանալով, որ ամեն անգամ, երբ իր ուղղաթիռը երեւում է մարզկենտրոնի երկնակամարում, մարդիկ ամենավերջին հայհոյանքներն ու անեծքներն են թափում հայոց պետականության գլխին:

Շատերին թվաց, թե մարզպետն այս անգամ աշխատավայր է շտապում՝ երկրում ստեղծված ծանր վիճակի թելադրությամբ, իր դիրքորոշումը մարզի բնակչությանը ժամ առաջ ներկայացնելու եւ մարդկանց խաղաղության ու հանդարտության կոչ անելու համար:

Բայց նրա հոգսը, որքան էլ զարմանալի է, դա չէր: Նրա խնդիրն էր՝ օգտվել խառնակ իրավիճակի ընձեռած հնարավորությունից եւ վերջնականապես լուծել մարզի բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի նախագահ Անուշ Օրբելյանի հարցը, ում ամիսներ շարունակ հետապնդում էր:

Որքան էլ տարօրինակ է, անբարո այդ առաքելության ջրապտույտի մեջ էր ներքաշվել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը:

Ուղղաթիռով մարզպետը Կապան էր բերում այդ նախարարության ենթակա ԲՍՓ գործակալության՝ աբուռը կորցրած եւ Վահեի գրպանում հայտնված երկու աշխատակցի՝ Նունե Շահվերդյան եւ Անուշ Սիմոնյան անուն:

Ուղղաթիռում նրանց զրույցի որոշ դրվագներ, զարմանալիորեն, հայտնի են դարձել մեր խմբագրությանը (թող Վահեն մտածի, թե ինչպես):

Նունե Շահվերդյանի եւ Անուշ Սիմոնյանի աչքում զորավոր սատրապի պատրանք ստեղծելու համար նա մի քանի ախմախություն է թույլ տվել, թեեւ դժվար է ասվածն ախմախություն որակելը:

Նախ հայտարարել է, թե այդ ուղղաթիռն իր սեփականն է, հարկ եղած դեպքում կարող է տրամադրել տիկնանց՝ միայն թե Անուշ Օրբելյանի հարցը լուծվի:

Այնուհետեւ շարունակել է աքլորային պահվածքը՝ հայտարարելով, թե ինքն ավելին է, քան սովորական մարզպետը: Ինքն արդեն խլել է Մեղրու Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրը եւ նվիրել՝ ում որ պետք է: Ինքն արդեն խլել է Մաքսիմ Հակոբյանի սյունիքյան ունեցվածքի մեծագույն մասը՝ այդ թվում՝ մարզային «Սոսի» հեռուստատեսությունը, նաեւ Քաջարանի կոմբինատում նրա ունեցած 12.5% բաժնեմասը՝ առանց մեկ լումա Մաքսիմ Հակոբյանին տալու: Ինքը հիմա էլ զբաղված է Քաջարանի կոմբինատի բաժնետոմսերի մնացած մասը վերցնելու գործով, եւ հաջողությունը մոտ է: Հենց դրա համար էլ, ինչպես ասել է, իր դեմ խաղ չկա ամբողջ հանրապետությունում…

Ահա այդպես էլ՝ աքլոր կտրած, վայրէջք է կատարել Կապանում:

Նույն այդ ժամանակ, մինչդեռ, մայրաքաղաքում միմյանց դեմ կանգնած էին հազարավոր քաղաքացիներ ու ոստիկաններ:

Նույն այդ ժամանակ մարդիկ էին վիրավորվում՝ հանուն Հայաստանի Հանրապետության:

Նույն այդ ժամանակ ամբողջ Սյունիքը սրտի տրոփյունով հետեւում էր մայրաքաղաքում տեղի ունեցող իրադարձություններին:

Ուղղաթիռից մեզ հասած տեղեկություններն անպայման պետք է ստուգել:

Հատկապես մտահոգող են նրա խոսքերը Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի եւ Քաջարանի կոմբինատի ունեցվածքի վերաբաշխման վերաբերյալ, ինչի մեջ, ըստ էության, խառն է մարզպետի անլվա ձեռքը:

Սովորական սնապարծության ցուցադրու՞մ էր այդ ամենը, թե՞ իրականության արձանագրում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Աշոտ, չե՞ս ուզում դատապարտել Վահե Հակոբյանի խուլիգանական արարքը

Ինչպես հաղորդել ենք ավելի վաղ, ապրիլի 22-ին Կապանի Թումանյան փողոցում Վահե Հակոբյանն ընդառաջ է գնացել ցուցարարներին: Չկարողանալով մարդկանց հետ նորմալ շփվել, կորցնելով հավասարակշռությունը՝ նա՝ իր թիկնապահների հետ, հայհոյել է հավաքվածներին, վիրավորական արտահայտություններ թույլ տվել: Թիկնապահներից մեկն էլ ապտակել է ցույցին մասնակցող երեխային, որից հետո մարզպետը խուճապահար լքել է դեպքի վայրը:

Այդ ամբողջ պատմությանը ներկա է գտնվել Կապան համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանը:

Նա ցուցարարների մոտ էր եկել իբրեւ Վահե Հակոբյանին ուղեկցող: Բայց, որքան էլ տարօրինակ է, համայնքի ղեկավարն իր պահվածքով չի փորձել զսպել գաղութարարների խուլիգանական պահվածքը:

Իհարկե, ցուցարարները «գեղեցիկ» խոսքեր նվիրեցին նաեւ Աշոտ Հայրապետյանին, բայց դա չի կարող պատճառ դառնալ նրա լռության եւ անդեմության հերթական դրսեւորման համար:

Աշոտ Հայրապետյանը մինչեւ հիմա չի դատապարտել Վահե Հակոբյանի եւ նրա թիկնապահի խուլիգանական արարքը:

Նա չի վիրավորվել, որ ապրիլի 21-ին Քաջարանի կոմբինատի ղեկավարությունը վարձկաններ է գործուղել իր գլխավորած քաղաք՝ մարդկանց վախեցնելու համար:

Աշոտ, չե՞ս ուզում գոնե ուշացումով ներողություն խնդրել այն մարդկանցից, որոնց (քո ներկայությամբ) հայհոյել է մարզպետը, որոնց ծեծել են նրա թիկնապահները:

Չե՞ս ուզում դատապարտել Վահե Հակոբյանի եւ նրա թիկնապահի խուլիգանական արարքը:

Չե՞ս ուզում դատապարտել Միհեր Պոլոսկովի կողմից Կապանի ցուցարարների դեմ վարձկաններ գործուղելու խայտառակությունը:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

Միհեր Պոլոսկովը Քաջարանի կոմբինատից վարձկաններ էր ուղարկել Կապան՝ ընդդեմ ցուցարարների

Ապրիլի 21-ը, այնուամենայնիվ, նշանավոր օր էր Կապանում:

Այդ օրն առաջին անգամ մարզկենտրոնի բնակիչները հրապարակավ արձագանքեցին մայրաքաղաքում տեղի ունեցող իրադարձություններին:

Փողոց դուրս եկած ցուցարարներին ահաբեկելու համար Քաջարանի կոմբինատից վարձկանների մի մեծ խումբ էր գործուղվել Կապան: Ըստ Քաջարանից ստացվող տեղեկությունների՝ վարձկաններին ուղարկել էր «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության դեկորատիվ տնօրեն Միհեր Պոլոսկովը՝ մարզպետի խնդրանքով:

Վարձկանների առջեւ խնդիր էր դրվել՝ ամեն գնով ցրել ցուցարարներին եւ ահաբեկել նրանց:

Եվ վարձկանները Կապանի ոստիկանների աչքի առաջ հայհոյում էին ցուցարարներին:

Կարծում ենք, որ Միհեր Պոլոսկովը պետք է բացատրություն տա տեղի ունեցածի համար:

Կարծում ենք նաեւ, որ Կապանի վրա վարձկաններ ուղարկելուց հետո նա վերջնականապես զրկվեց մեր երկրամասում ապրելու բարոյական իրավունքից:

«Սյունյաց երկիր»

«Սպորտ հանուն լիարժեք կյանքի»

Այս նշանաբանով երկու օր շարունակ ապրիլի 14-15-ին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մարզահամալիրում Հաշմանդամ անձանց սեղանի թենիսի հայկական ֆեդերացիայի նախաձեռնությամբ (նախագահ՝ Կամո Դավթյան) տեղի ունեցավ սեղանի թենիսի մրցաշար՝ մասնակցությամբ Վրաստանի, Արցախի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի հաշմանդամ մարզիկների:

Մրցանակները խաղարկվեցին տղամարդկանց եւ կանանց մենախաղերում եւ խառը զուգախաղում:

Կանանց մենախաղում ուժեղագույնն Արեւ Տոպոլյանն էր (Վրաստան), տղամարդկանցը՝ Գեւորգ Բեգլարյանը (Երեւան), զուգախաղերում հաղթեց Տիգրան Պետրոսյան-Անդրանիկ Մկրտչյան զույգը: Հաղթողներին եւ մրցանակակիրներին հանձնվեցին գավաթներ եւ մեդալներ:

Մրցաշարն ավարտվելուց հետո ֆեդերացիայի նախագահ Կամո Դավթյանը շնորհակալագրեր հանձնեց մի խումբ անձանց՝ մրցաշարի կայացմանը նպաստելու, հաշմանդամության սպորտի զարգացման եւ մասսայականացման համար, նաեւ նշեց նման մրցաշարերի կարեւորությունը մրցափորձ ձեռք բերելու, եւ պարզապես հաշմանդամ մարզիկների՝ միմյանց հետ շփվելու առումով:

Եվ, իրոք, եզրափակիչ դուրս եկած մարզիկները բավականին հասուն խաղ ցուցադրեցին: Տիգրան Պետրոսյանը (Սպիտակ) երկու տարի առաջ եւս Քաջարանում մասնակցել էր նման մրցաշարի եւ ասում է, որ նախորդի համեմատ բարձրացել է մրցաշարի մակարդակը թե՛ մարզական, թե՛ կազմակերպչական առումներով: 33-ամյա Գեորգի Ասլանիշվիլին Թբիլիսիից նշում է, որ մրցաշարը լավ է կազմակերպված, եւ ինքն արդեն երրորդ անգամ է Հայաստանում:

Մրցաշարի մասնակիցներին եւ հանդիսականին գեղեցիկ ելույթներով ողջունեցին Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության խմբի սանուհիները: Մրցաշարի մասնակիցների համար հուշանվերներ էր պատրաստել «Վորլդ Վիժն» կազմակերպությունը: Հաշմանդամ մարզիկները հրաժեշտ տվեցին իրար՝ կրկին հանդիպելու ակնկալիքով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Իրանի Մեջլիսը հաստատել է Արաքս գետի վրա ՀԷԿ-երի կառուցման օրինագիծը

ԵՐԵՎԱՆ, 18 ԱՊՐԻԼԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանի խորհրդարանն ապրիլի 18-ին 162 կողմ, 5 դեմ եւ 5 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հաստատել է «Արաքս գետի վրա ՀԷԿ-երի կառուցման վերաբերյալ» օրինագիծը:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ արտաքին գործերի նախարարության մամուլի, տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապի վարչությունից, մինչ այդ՝ ապրիլի 17-ին, ԻԻՀ Մեջլիսի բաց նիստի ընթացքում ընդունվել էր որոշում՝ Հայաստանի հետ համագործակցությամբ Արաքս գետի վրա ՀԷԿ-երի կառուցման նախագծի շուրջ հրատապ քննարկումներ սկսելու վերաբերյալ:

Մեղրիի ՀԷԿ-ի կառուցման ծրագիրը տարիներ շարունակ գտնվել է Հայաստան-Իրան տնտեսական հարաբերությունների օրակարգային կարեւոր հարցերի շարքում:

Սիսիանի հիվանդանոցը նույնպես կլուծարվի, իսկ գույքը կամրացվի պաշտպանության նախարարությանը

ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ներկայացրած որոշման նախագծով կլուծարվի նաեւ «Սիսիանի հիվանդանոց» ՓԲԸ-ն: Իսկ տարածաշրջանի բնակչության բուժօգնությունն ու սպասարկումը կիրականացնի Զանգեզուրի կայազորային հոսպիտալը: Բանն այն է, որ հիվանդանոցը եւ հոսպիտալն առօրյա գործունեության ընթացքում հաճախ կրկնում են տարածաշրջանի բնակչության ստացիոնար բժշկական օգնության գործառույթները՝ երբեմն նաեւ խանգարելով մեկմեկու: Ըստ ՊՆ-ի՝ հիվանդանոցի հաստիքների համալրումը բավականին մեծ խնդիրներ է առաջացնում՝ կապված հեռու տեղակայման ու ցածր վարձատրության հետ: Ի դեպ, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ հիվանդանոցի գույքը կամրացվի պաշտպանության նախարարությանը, որն էլ իր հերթին այն կտրամադրի «Զանգեզուրի կայազորային հոսպիտալ» պետական հիմնարկին:

armlur.am
12 ապրիլի 2018թ.

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1230, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 26.04.2018թ.: